Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[1] Դուրս գրման ամսաթիվ			[2] Սերիա	[3] Համար
10	Դեկտեմբեր	2018 թ.	Ա	8544003899

[4] Մատակարարման ամսաթիվ		
10	Դեկտեմբեր	2018 թ.

Ճշգրտվող հաշվի

Սերիա	Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	

[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	48107317 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.3	X	6566.67	39400

Դուրս գրող PARSEGHYAN LARISA 6808700354
(անունը, ազգանունը)

Ստացող

[illegible] ստորագրությունը (անունը, ազգանունը)

[illegible] ստորագրությունը (անունը, ազգանունը)

10/12/2018 15:23:42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԵՏՄԱՀՈՒ ԴԱՏԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ-ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«06» դեկտեմբերի 2017թ. ք.Արմավիր

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության կապիտան Հ.Սրեյանս, վերանայելով վարույթիս թիվ 48107317 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017թ. սեպտեմբերի 7-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնի ՀՈԲ տեսուչ Ն. Անտոնյանը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ նույն օրը իրեն է զանգահարել Արմինե Արմենի Մանասյանը և հայտնել, որ իր մորեղբայր Հովսեփ Նահապետի Մանասյանը մի քանի օր է տանից բացակայում է:

Դեպքի վայրի զննությամբ պարզվել է, որ Հ. Մանասյանի Արմավիրի մարզի Խանջյան գյուղի տան տնամերձ հողամասի վերջնամասում գտնվող փայտե զուգարանը այրված վիճակում է, իսկ զուգարանում հայտնաբերվել է մարդու գանգին նմանվող այրված ոսկրերի մնացորդներ:

08.09.2017թ. նշանակվել են դատաբժշկական, դատահրդեհատեխնիկական և դատանյութագիտական համալիր փորձաքննություններ:

Դեպքի առթիվ 05.10.2017թ. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 48107317 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

05.10.2017թ. Հովսեփ Մանասյանը ճանաչվել է տուժող, իսկ վերջինիս քույր Նարգիզ Մանասյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ ու ցուցմունք է տվել այն մասին, որ բնակվում է Խանջյան գյուղում դստեր՝ Արմինե Մանասյանի հետ միասին: 1995թ. ամուսնալուծվել է, որից հետո էլ դստեր հետ բնակություն է հաստատել հայրական օջախում:Հանգուցյալ Հովսեփ Մանասյանն իր հարազատ եղբայրն է: 2006թ. մահացել է հայրը՝ Նահապետ Մանասյանը, իսկ 2012թ. մահացել է մայրը՝ Շողիկ Մանասյանը, որից հետո ինքը, դուստրն ու եղբայրը բնակվել են համատեղ:Հայրը կամ մայրը որևէ հոգեկան հիվանդությամբ չեն տառապել, իսկ եղբայրը տառապել է հոգեկան հիվանդությամբ:1989թ. թվականից Հովսեփի մոտ նկատել են հոգեկան շեղումներ ու դրանից հետո նրան հաճախակի են ուղեկցել հոգեբուժի մոտ:Հովսեփը հաշվառված է եղել Արմավիրի հոգեբուժական կաբինետում ու ստացել է է հոգեբուժի կողմից նշանակված դեղորայքներ:Հովսեփի վիճակը հաճախակի է վատացել ու նրա մոտ սրացումներ են եղել և իրենք աշխատել են չշփվել նրա հետ:Հովսեփը մեկ անգամ ինքնասպանության փորձ է կատարել 2002թ. թույ

խմելով, բայց իրենց հաջողվել է նրա կյանքը փրկել ու ոստիկանությունն է զբաղվել այդ հարցով:Դրանից հետո Հովսեփը նման փորձեր չի կատարել: 1999թ. Հովսեփն ամուսնացել է, սակայն 1 շաբաթ անց բաժանվել, քանի որ նրա կինը նույնպես հոգեկան խնդիրներ է ունեցել:Վերջին շրջանում Հովսեփի հոգեկանը ամբողջությամբ խախտվել է ու նա հաճախակի է ասել, որ գնալու է ու իրեն գցելու է կամրջից, քանի որ ոչ ընտանիք ունի, ոչ էլ կին: 2017թ. սեպտեմբերի 1-ին, երբ նա գտնվել է տանը ինքը զգացել է, որ Հովսեփը կրկին ագրեսիվացել է ու տան բակում ծխելիս հայհոյանքներ տալով գնացել ու եկել է: Դրանից հետո այլևս նրան չի տեսել:Հովսեփը գրեթե միշտ փակվել է իր ննջասենյակում ու ընթերցանությամբ զբաղվել և այդ ընթացքում իրենք չպետք է անհանգստացնեին նրան, քանի որ նա դառնում էր անկառավարելի:Երբ նա փակվել է սենյակում կողպել է սենյակի դուռը ու սենյակից դուրս գալիս էլ է կողպել դրա դուռը:2017թ. սեպտեմբերի 2-ին առավոտյան, երբ գնացել է իրենց հարևան Վարդանենց տուն հաց թխելու, հարևաններից Ահարոնը իրենից հարցրել է, թե գիշերը որտեղ են գտնվել ու չեն նկատել արդյոք, որ իրենց հողամասի զուգարանը այրվել է:Ինքը զարմացած վերադարձել է տուն ու տեսել, որ զուգարանն այրված վիճակում է, սակայն չի մոտեցել զուգարանին, բայց հասկացել է, որ դա Հովսեփն է այրել: Վերադառնալով տուն կարծել է, որ Հովսեփը փակվել է սենյակում ամոթանք է տվել նրան հարցնելով, թե այսուհետ որտեղ ենք հոգալու իրենց կարիքները գնացել է ննջասենյակ:Հովսեփի բնավորության մեջ եղել է իրենց խոսքերին չարձագանքելն ու ինքը մտածելով, որ նա կրկին չի արձագանքում այլևս ուշադրություն չի դարձրել նրա արարքին:Դրանից հետո ողջ օրը ինքը Հովսեփին չի տեսել: Եղել են դեպքեր, որ Հովսեփը մի քանի օրով հեռացել է տանից կամ հոգեբուժարան է գնացել կամ իրենց անհայտ հասցեով ու մի քանի օր անց վերադարձել է ու ինքն էլ մտածել է, որ նա կրկին մի տեղ է գնացել:Սակայն 2017թ. սեպտեմբերի 06-ին տեսնելով, որ նա չի վերադառնում անհանգստացել է ու դստեր հետ փորձել են պարզել նրա գտնվելու վայրը, սակայն ոչինչ չեն պարզել ու դուստրը 07.09.2017թ. զանգահարել է իրենց գյուղի ՀՈԲ տեսուչ Անտոնյանին և հայտնել, որ Հովսեփից մի քանի օր տեղեկություն չունեն:Անտոնյանը գնացել է իրենց տուն ու զրուցելիս ինքը նրան հայտնել է, որ Հովսեփը մի քանի օր առաջ այրել է արտաքնոցը և Անտոնյան քայլել է արտաքնոցի կողմը և մի քանի րոպե անց վերադառնալուց հետո իրենց հայտնել է, որ արտաքնոցում առկա է այրված կմախք ու իրենք էլ մտածեում են, որ հենց դա Հովսեփի կմախքն է ու նա է այրել ինքն իրեն: 06.09.2017թ. էլ, երբ անցնելիս է եղել զուգարանի կողքով, ճանապարհին՝ զուգարանի մետաղյա թիթեղի վրա, նկատել է մի ինչ-որ խոշոր եղջրավոր անասունի գլուխ ու այն հրելով՝ գցել է արտաքնոցը և հեռացել:Ինքը հստակ է հիշում, որ դա եղել է խոշոր եղջրավոր անասունի գլուխ, որն իր կարծիքով թափառող շներն են քարշ տվել այդտեղ:Եթե դա իր եղբոր գանգի այրված ոսկորը լիներ, ինքը այն հաստատ կտարբերակեր:Եղբայրը երբևե բջջային հեռախոս չի ունեցել ու հեռախոսահամար չի օգտագործել:Ինքը նախկինում հայտնել է, որ իրենց տանը դյուրավառ նյութեր չեն եղել ու միայն այդ օրերին իրենց տանից

բացակայել է 3լ տարողության ձեթի պոլիէթիլենային տարան, որում եղել է 1.5լ տարողության ձեթ:Ինքը համոզված է, որ տնամերձ հողամասի զուգարանում հայտնաբերված այրված գանգը եղբոր ոկրի մնացորդն է, քանի որ այդ ընթացքում այլ անհետ կորածներ չեն հայտարարվել ու բացի դա էլ, երբ ինքը տեղեկացել է, որ այդ գանգի ստորին ծնոտի ատամնաշարը արհեստական և շարժական է եղել համոզվել է, որ դա իրոք իր եղբոր սկրերի մնացորդներն են, քանի որ 2017թ. հունիս-հուլիս ամսին եղբայրը իրենց համագյուղացի Ջիվանի մոտ տեղադրել է արհեստական ատամնաշար:

Նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև Արմինե Մանասյանը:

Որպես վկա հարցաքննվելիս Ջիվան Ղուկասի Տոնոյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2017թ. հունիս ամսին իրենց տուն է գնացել Հովսեփ Մանասյանն ու խնդրել է իր համար շարժական ատամնաշար պատրաստել, հայտնելով, որ ցանկանում է ամուսնանալ, բայց քանի որ ատամ չունի, իրեն աղջիկ չեն տալիս:Այդ ժամանակ ինքը ատամնատեխնիկի գործունեությամբ չի զբաղվել, բայց ճանաչելով Հովսեփին ու տեղյակ լինելով նրա հոգեկան հիվանդության մասին նրա խնդրանքը չի մերժել, քանի որ երբ առաջին օրը մերժել է նրան, Հովսեփը թքել է իր վրա ու ինքն էլ վախենալով, որ Հովսեփը իրեն կվնասի 2016թ. հունիս ամսին նրա համար պոլիմեր նյութից ստորին արհեստական ատամնաշար է պատրաստել ու տեղադրել ստորին ծնոտին:Ջիվան Տոնոյանը հայտնել է նաև, որ Հովսեփի ընտանիքի անդամները շատ լավ են վերաբերվել նրա հետ:

Նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննվել են Ահարոն Ապետնակի Աբրահամյանը, Նինա Վարազդատի Խոսրովյանը, Երվանդ Ռաֆայելի Սարգսյանը, ՀՈԲ տեսուչ Նելսոն Անտոնյանը, հոգեբուժ Ռոբերտ Ջիբրաիլի Ալեքսանյանը, կատարվել են զննություններ:

Երվանդ Սարգսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը Հովսեփ Մանասյանի և նրա ընտանիքի անդամների հետ գտնվել է մտերիմ հարաբերությունների մեջ և թե Արմինե Մանասյանը, թե Նարգիզ Մանասյանը շատ հոգատար են եղել Հովսեփի հետ:Համագյուղացիները խուսափել են շփվել Հովսեփի հատ, քանի որ նա բոլորին անպատվել է ու Հովսեփը միայն իր հետ է շփվել:2017թ. օգոստոս ամիսն էլ, երբ հերթական անգամ զրուցել է Հովսեփի հետ, վերջինս հայտնել է, որ այրելու է իրեն կամ գնալու է Արցախի Հանրապետություն ամուսնա:Ինքը նախատել է Հովսեփին հարցնելով, թե արդյոք ընտանիքի անդամները վատ են վերաբերվում իր հետ, սակայն Հովսեփը պատասխանել է, որ ընտանիքի անդամներն իր հետ լավ են վերաբերվում, սակայն ինքը ցանկանում է իր ընտանիքն ունենալ:

16.11.2017թ. ստացվել է դատաբժշկական փորձաքննության թիվ 1092 եզրակացությունը, համաձայն որի հաշվի առնելով գանգի խոռոչում առկա շարժուն որդերի առկայությունը, կարելի է ասել, որ Հ. Մանասյանի մահը վրա է հասել դիակի մարմնամասերի դատաբժշկական փորձաքննությունից մոտ 4-5 օր առաջ և ավելի:Դիակի այրման-ածխացման, մարմնամասերի, ներքին օրգանների և կմախքի

ոսկրերի բացակայությամբ պայմանավորված մահվան պատճառը որոշել հնարավոր չէ:

Հ. Մանասյանի գլխի, պարանոցի, կրծքավանդակի վերին երրորդականի շրջանների այրված-ածխացած մարմնամասերի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերվել են գանգի թաղի ոսկրերի գծային տեսքի ամբողջականության խախտումներ, որոնց վաղեմությունը՝ այդ թվում նաև մինչ մահու կամ հետմահու լինելու հանգամանքը հնարավոր չէ որոշել:Չի բացառվում բարձր ջերմային գործոնի ազդեցության հետևանքով վերջիններիս առաջացումը մահվանից հետո:

Հ.Մանասյանի դիակի այրված-ածխացած մարմնամասերի մնացորդներից վերցված հյուսվածքները ուսումնասիրելիս հակածիններ չեն հայտնաբերվել, հետևաբար դրանց արյան խմբային պատկանելիությունը որոշել հնարավոր չէ :Հ. Մանասյանի դիակի այրված-ածխացած մարմնամասերի մնացորդներից վերցված հյուսվածքների ուսումնասիրությամբ սպիրտներ և թմրանյութեր չեն հայտնաբերվել:

Հ. Մանասյանի դիակի այրված-ածխացած գանգի ստորին ծնոտին հայտնաբերվել է արհեստական շարժական ատամնաշար:

30.11.2017թ. ստացվել է դատահրդեհատեխնիկական և դատանյութագիտական համալիր փորձաքննության թիվ 17-1883 եզրակացությունը համաձայն որի, ելնելով կատարված հետազոտությունների արդյունքներից, մասնավորապես՝ դեպքի վայրում հրդեհի ամրակցված պատկերից, առկա հետքերի համադրումից, ներկայացված նմուշներում նավթամթերքներին և դյուրավառ հեղուկներին բնորոշ հետքերի բացակայությունից, փորձագետը եզրակացնում է, որ դեպքի վայրում՝ Արմավիրի մարզի Խանջյան գյուղում, Հ. Մանասյանին պատկանող առանձնատան հողամասի վերջնամասում առաջացած հրդեհի օջախը գտնվել է նշված հատվածում առկա արտաքնոցի տարածքում:Հրդեհը բռնկվելով նշված հատվածում՝ ընդգրկել է ամբողջ արտաքնոցը և մասամբ անցում կատարել դեպի հարակից խոտածածկ տարածք:

Ներկայացված նմուշներում նավթամթերքներին և դյուրավառ հեղուկներին բնորոշ հետքեր չեն հայտնաբերվել, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես դրանց ի սկզբանե բացակայությամբ, այնպես էլ ամբողջական այրմամբ:Պատասխանել <<Երբ է առաջացել հրդեհը և ինչքան է եղել այրման տևողությունը>> հարցին, հնարավոր չէ փորձագիտական բավարար չափանիշների բացակայության պատճառով:

Փորձաքննության ներկայացված մուգ դարչնավուն երանգի, 4,396 գրամ քաշով, մանրեացված, պինդ նյութը <<ՀՀ հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների>> կազմում ընդգրկված որևէ թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր, <<ՀՀ թունավոր նյութերի>>, <<Ռոտերդամի կոնվեցիայով կարգավորման ենթակա՝ ՀՀ-ում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների>> ցանկում, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարի 21.06.2010թ. 115-Ն հրամանով հաստատված <<ՀՀ-ում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների>>

անվանացանկում ընդգրկված որևէ անօրգանական և օրգանական բնույթի թունավոր նյութեր, ինչպես նաև քայքայիչ հիմքեր, թթուներ և գերօքսիդներ չի պարունակում:

Օբյեկտի կոնկրետ բաղադրությունը որոշել հնարավոր չէ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ում համապատասխան սարք-կարքավորումային բազայի գիտականորեն հիմնավորված մեթոդիկայի բացակայության պատճառով:

Օբյեկտի բնույթի որոշումը դուրս է նյութագետ-փորձագետի հատուկ գիտելիքների շրջանակից:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Հովսեփ Մանասյանը 1996թ.-ից հաշվառված է Արմավիրի ԲԿ-ի հոգեբուժական կաբինետում <<Շիզոֆրենիա պարանոիդ ձև>> ախտորոշմամբ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան է ուղարկվել համապատասխան գրություն, որով պահանջվել է տրամադրել դատական հոգեբանության բնագավառում համապատասխան մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետի տվյալներ՝ փորձագետ նշանակելու և փորձաքննության կատարումը նրան հանձնարարելու համար:

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանից ստացված թիվ 083154/405 գրությամբ առաջարկվել է որպես հոգեբան-փորձագետ նշանակել դոցենտ Գայանե Հակոբի Ղազարյանին, ով համապատասխան որոշմամբ նշանակվել է հոգեբան փորձագետ:

Նկատի ունենալով, որ սույն գործի համար կարևոր նշանակություն ունեցող որոշակի հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբանության և հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243-246, 248-249 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 48107317 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբուժական-դատահոգեբանական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ կից դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովին և հոգեբան-փորձագետ Գայանե Հակոբի Ղազարյանին:

2. Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

- Հովսեփ Մանասյանը հոգեկան հիվանդությամբ տառապել է թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և երբվանի՞ց :
- Եթե Հովսեփ Մանասյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա ինքնասպանության կատարելու պահին այդ հիվանդությունը զրկե՞լ է նրան իր գործողությունները ղեկավարելու ունակությունից, թե՞ ոչ:

- Ինքնասպանության կատարելու, ինչպես նաև դրա նախորդող պահին Հովսեփ Մանասյանը գտնվե՞լ է արդյոք այնպիսի հուզական վիճակում, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա, արդյոք նա ունակ եղե՞լ է հասկանալու իր գործողությունների բնույթն ու դրանցից բխող հետևանքները :
- Ինչպիսի անհատական-հոգեբանական առանձնահատկություններ է ունեցել Հովսեփ Մանասյանը:
- Հովսեփ Մանասյանին բնորոշ եղել է այնպիսի անհատական-հոգեբանական առանձնահատկություններ, որոնք կարող էին վերոնշյալ իրավիճակում ազդել նրա վարքի վրա և հանգեցնել ինքնասպանության:

Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում և կմտնեն փորձագետի իրավասության մեջ, որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

3. Փորձագետներին տրամադրել սույն որոշումը, քրեական գործի նյութերը ՀՀ ԱՆ կից դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովին կներկայացվեն լրացուցիչ, իսկ փորձագետ Գայանե Ղազարյանին տրամադրել Քրեական գործի նյութերի պատճենները:

4. Հանձնարարել ՀՀ ԱՆ կից դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի նախագահին՝ պարզաբանել փորձագետներին, որոնց հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85 հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու համար ՀՀ քր.օր. 338 հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ԱՎԱԳ ՔՆՆԻՉ ՀԱՐԵՅԱՆ